**27.12.2022 թ. կնքված «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2022-96» ծածկագրով պայմանագրի շրջանակներում ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ**

## համաձայնագիր № 4

ք. Երևան «31» 05 2023 թ.

**ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը**, ի դեմս գլխավոր տնօրեն ՝ **Ա. Վանյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ն**, ի դեմս լիազորված անձ՝ **Ա. Վանեցյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 15-րդ կետի 6-րդ ենթակետը և № «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2022-96» պայմանագրի 7.15 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1. 2022 թ. դեկտեմբերի 27-ին կնքված № «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2022-96» պայմանագրի մասով հաստատել
   - հաստատել գնման ժամանակացույց նոր խմբագրությամբ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի,
   - հաստատել վճարման ժամանակացույց համաձայն սույն համաձայնագրի հավելված N 2-ի:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2022-96» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից. 1-ին էջը՝ սույն համաձայնագիր № 2-ն է, իսկ 2-3-րդ էջերը՝ սույն համաձայնագրի հավելվածներ №№ 1-ն և 2-ն են հայերեն լեզվով, երկու օրինակից, որը ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ | «Պահապան 1» ՍՊԸ |
| Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12 | Հասցե՝ ք. Երևան, Ավան, Քուչակ, 16/2 |
| Կենտրոնական գանձապետարան՝ | Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900018004649 | Հ/Հ՝ 1150019206166199 |
| ՀՎՀՀ 02625503 | ՀՎՀՀ՝ 00925301 |
| Գլխավոր տնօրեն՝ Ա. Վանյան | Տնօրեն՝ Ա. Վանեցյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
31.05 2023 թ. կնքված
N 5 համաձայնագրի
Հավելված N 1
«27» դեկտեմբերի 2022 թ. կնքված
N «ԳՀԾՁԲ-ՀԱԿԱԿ-2022-96» ծածկագրով պայմանագրի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Ծառայության

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չ/մ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ* | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման № 1 համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 28.02.2023 թ. | № 2 համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 31.03.2023 թ. | № 3 համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 30.04.2023 թ. | № 4 համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 31.05.2023 թ. | № 5 համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 30.06.2023 թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Պատվիրատուի (այսուհետ՝ Պատվիրատու) հասցեն՝ ք. Երևան, Դավիթ Մալյան 37<br>Կատարողը՝ (այսուհետ՝ Կատարող) հանդիսանում է պահնորդական գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:<br>Ծառայության տեսակը՝ պահպանության ենթակա գույքի և անվտանգության պահպանում, անցագրային և ներօբեկտային պայմանակարգերի ապահովում, 24 ժամյա ամենօրյա /շաբաթվա բոլոր օրերին ներառյալ հանգստյան և տոնական օրերին/ պահնորդական ծառայության իրականացում՝ պարտադիր թվով 2 պահնորդ-ծառայողի ներկայության ապահովմամբ:<br>**1.Կատարող ընկերությանը ներկայացվող պահանջներ՝**<br>ա) պահնորդական գործունեության լիցենզիա,<br>բ) օրինական տիրապետման տակ գտնվող ծառայողական զենքը ունենալու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի առկայություն,<br>գ) ներկայացվող աշխատակիցների՝ պահնորդի կարգավիճակ ունենալու՝ պատրաստության/որակավորում/ վերաբերյալ հավաստող փաստաթղթեր՝ տրված համապատասխան կրթական գործունեության լիցենզիա ունեցող հաստատությունների կողմից,<br>դ) ներկայացվող աշխատակիցների հատուկ պատրաստության՝ զենք պահելու ու կրելու թույլտվության վերաբերյալ,<br>Կատարող ընկերությանը վերապահված պարտականություններ<br>ա) յուրաքանչյուր հերթափոխի ընթացքում թվով 2 աշխատակիցներին անվտանգության միջոցների ապահովում՝ Ծառայողական զենք, ռետինե մահակ, ձեռքի լապտեր, պահպանվող տարածքում կապի միջոցների՝ ահազանգման սարքավորումների հագեցվածություն, կառավարման կենտրոնի և հերթապահություն իրականացնող անձանց հետ մշտական օպերատիվ կապի հնարավորություն:<br>բ) յուրաքանչյուր հերթափոխի ընթացքում թվով 2 աշխատակիցներին տրամադրել կազմակերպության ապրանքային նշանով տարբերվող հատուկ համազգեստ և անձը հաստատող վկայական,<br>**2. Կատարող Ընկերությունը՝**<br>ա) նյութական պատասխանատվություն է կրում գողությամբ կամ հանրորեն վտանգավոր այլ արարքով պատվիրատուին (հասցված) պատճառված վնասի դեպքում, եթե վնասն առաջացել է կատարող ընկերության աշխատակցի կողմից պայմանագրի պայմանների խախտման արդյունքում:<br>բ)ծառայություն իրականացնող պահնորդի որակավորման/ժամկետայնության պահպանման/, պատշաճ աշխատանքի համար,<br>**3.Պահնորդին ներկայացվող պահանջներ՝** | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 75241200 | Օբյեկտի պահպանության ծառայություն | ա) Նվազագույն միջնակարգ կրթություն<br>բ) տվյալ գործունեության բնագավառում աշխատանքային փորձի առկայություն,<br>գ) անհատական հականիշներ՝ մշտապես ներկայանալի արտաքին տեսք, հիգիենայի կանոնների խստագույն պահպանություն,<br>դ)չծխման և վարվելակերպի պատշաճ պահպանություն՝ պաշտոնատար անձանց, աշխատողների և ֆիզիկական անձանց հետ.<br>ե) ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիության պահպանություն:<br>**4.ՊԱՀՆՈՐԴԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**<br>ա) ապահովել անցագրային սահմանված պայմանակարգը,<br>բ) ապահովել տարածքում առկա շենքերի, շինությունների, գույքի, ապրանքանյութական արժեքների անվտանգությունը,<br>գ) պահպանվող օբյեկտի տարածքում իրականացնել շրջայց,<br>դ) հերթափոխն ընդունելիս ստուգել պահպանությանը հանձնվող տարածքների, շենքերի, շինությունների և գույքի շրջակայքի փաստացի վիճակը և համապատասխանությունը, կատարել գրառում համապատասխան մատյանում,<br>ե) հերթափոխի ավարտին սահմանված կարգով հանձնել պահպանվող օբյեկտը, կատարելով գրառում նախատեսված մատյանում,<br>զ) անհրաժեշտության դեպքում զննել պահպանվող օբյեկտի տարածք մտնող և տարածքից դուրս եկող տրանսպորտամիջոցները,<br>է) հետևել անվտանգության ապահովման համակարգի տեխնիկական միջոցների ցուցմունքներին, գրանցել տվյալները,<br>ը) արտակարգ դեպքերի ժամանակ, իրականացնել արագ արձագանքում և մինչ իրավապահ մարմինների ժամանելը միջոցներ ձեռնարկել դեպքի վայրի հետքերի պահպանման և կողմնակի անձանց մուտքը թույլ չտալու ուղղությամբ, բացահայտել դեպքի ականատեսներին, արձանագրել նրանց տվյալները,<br>թ) ստուգել պահպանվող օբյեկտի տարածք ներկրվող և տարածքից դուրս բերվող բեռների վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան անձանց միջոցով,<br>ժ) տվյալ տարածքում իրավախախտում կատարած անձին իր իրավասությունների շրջանակում սահմանված կարգով վնասազերծել,<br>ի) անհրաժեշտության դեպքում կատարել պահպանվող օբյեկտի տարածք մտնող և տարածքից դուրս եկող քաղաքացիների անձնական խուզարկություն, նրանց մոտ գտնվող առարկաների զննում,<br>լ) ոչ ստանդարտ իրավիճակներում, հնարավոր վտանգների և դրանց առաջացման ռիսկերի մասին զգուշացնել նկատված խախտումների մասին տեղյակ պահել ղեկավարությանը,<br>խ) իր աշխատանքի ընթացքում արտակարգ իրավիճակների արձանագրման դեպքերում կազմել զեկուցագիր՝ հաշվետվության տեսքով,<br>ծ) սահմանված դեպքերում և կարգով կիրառել զենք, ֆիզիկական ուժ, հատուկ և տեխնիկական միջոցներ,<br>կ) ցուցաբերել առաջին օգնություն,<br>հ) պահպանվող օբյեկտում հետևել անվտանգության ընդհանուր կանոնների պահպանությանը:<br>կատարել պատվիրատու կողմից օրինական հանձնարարականներ անցագրային ռեժիմի կարգի փոփոխության հետ կապված:<br>ձ) հերթափոխի ընթացքում իրականացնել տարածքի վերահսկողություն, հասարակական կարգի վերահսկողություն, կանխել աչքին տեսանելի գույքի և սարքավորումների չարտոնված տեղաշարժը, արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում/հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն/:<br>ղ) Կատարել Պատվիրատուի և Կատարող ընկերության կողմից պայմանագրով սահմանված պահանջներ: | դրամ | 9,900,000 | 1 | ք. Երևան, Դ. Մալյան, 37 | 1,650,000 | 2,475,000 | 3,300,000 | 4,125,000 | 4,950,000 |

*Պայմանագրով նախատեսված առավելագույն գումարը:
Պայմանագրի ընդհանուր առավելագույն գումարը կվերահաշվարկվի պայմանագրով սահմանվող ծառայությունների մատուցման փաստացի ժամկետների հիման վրա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12
Կենտրոնական գանձապետարան՝
Հ/Հ 900018004649
ՀՎՀՀ 02625503

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Պահապան 1» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ավան, Քուչակ, 16/2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150[illegible]
ՀՎՀՀ [illegible]
Տնօրեն՝ [illegible]նեցյան

(ստորագրություն)

Հավելված № 2
«31» 05 2023 թ. կնքված
№ 5 համաձայնագրի
Հավելված № 2
«27» դեկտեմբերի 2022 թ. կնքված
N «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2022-96» ծածկագրով պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | |
| | | | I կիսամյակ | II կիսամյակ | Ընդամենը |
| 1 | 75241200 | Օբյեկտի պահպանության ծառայություն | 4,950,000 | 4,950,000 | **4,950,000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ**
**Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12**
**Կենտրոնական գանձապետարան**
**Հ/Հ 900018004649**
**ՀՎՀՀ 02625503**
**Գլխավոր տնօրեն՝ Ա.Վանյան**

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Պահապան 1» ՍՊԸ**
**Հասցե՝ ք. Երևան, Ավան, Քուչակ, 16/2**
**Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ФԲԸ**
**Հ/Հ՝ 1150019206166199**
**ՀՎՀՀ՝ 00925301**
**Տնօրեն՝ Վ. Վանեցյան**

(ստորագրություն)